

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբլ.
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի նամակները մեջ:
Օտարաբնակները դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրատարները ըստ 2 կոպեկի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ 1882 ԹԻՒՆ

(Տ Ա Ս Ն Ե Ւ Մ Է Կ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակվի նոյն դրոշմով և նոյն պրոպագանդայով:
ՊՐՈԳՐԱՄԱՆ. I. Տեղութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներ-
քին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելետոն
կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ:
ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԿԻՆԸ, 10 ռուբլ է, կես տարվան 6 ռ., իւրաքանչիւ
ամսին 1 ռուբլ: Հատով համարները 5 կոպեկ:
Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցեով. Тифлис, редакция «Мшак».
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բագրիւմ, Նամակ Խմբագրիւն, Նամակ Խմբագրիւն, Ներքին
լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յարմարի և
Գերմանիայի Նամակ Գերմանիայից, Արտաքին
լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ, —
ՅԱՆՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԺՈՒԹ

Նոյեմբերի 11-ին

Կարգադրով «Մշակի» 195 համարում պ. Ար-
մենակի Թադևոսի իմ վերաբերութեամբ գրած
նամակը, կամեաւ եմ այդ նամակին երկու
խօսքով պատասխանելու: Առաջին և առաջա-
կել էի, որ լաւ կը լինէր պարսկալեզու ունե-
նալ մի հայ լրագիր, թող այդ լինէր շարքի
մի փոքրիկ թերթ: Պ. Արմենակը առաջ է բե-
րում որ Թադևոսի մի 20 հոգի չը կայ լրագիր
կարգադրող: Բայց լրագիրը մի փոքրիկ քաղաքի
համար միայն չի լինի. եթէ «Մշակը» Թիֆլիսում
չառ բաժանորդներ չունի, միթէ ուրիշ քաղաք-
ներում հարկաւորներ չը կան: Պարսկաստանի
հայոց փոքրիկ լրագիրը կարող է հետեւեալ
օգուտները ունենալ. 1) Պարսկաստանի կորած
հայերին, որոնք փոքր առ փոքր անհետանում
են, կը ծանօթացնէ մեզ առանձնայեօրէն, և կը
պահպանէ նրանց մէջ ազգային գաղափարը և
մայրենի լեզուի գործածութիւնը: 2) Պարսկա-
ստանում քիչ շատ ուսում ստացած երիտասարդ-
ները, որոնք թէև ուղում են գրականութեամբ
պարապել, բայց այնքան բիւսկ չունեն, որ դե-
մին իրենց նամակներով «Մշակին», կը սկսեն
փոքր առ փոքր թղթակցել տեղական լրագրի
մէջ և զարգանալ ու մտքեր զարգացնել: 3) Ու-
րովհետև պետութեան մէջ մի երկու հատ հազիւ
պարսկերէն լրագիր կայ, հայոց լրագիրը կարող
է պարապել և քաղաքական հարցերով: Իսկ ինչ
վերաբերում է նիւթական միջոցի, կարծեմ պա-
րսկալեզուները քիչ հարուստներ չը կան. ինչի-
մասին հարցաւորը արագաբար Սալմաստի պէս գաւա-
ռական քաղաքում կարող է մի ուսումնարան
հիմնելու: Համար հազար թուաններ հաւաքել,
իսկ մի տպարանի համար օգնութիւն չի լինի:
Այստեղ է այժմ մի թեհրանցի հայ, պ. Մարգա-
րեանց, որ վերադառնում է Ռուսաստանից, մի
ուսում առած մարդ, գիտէ մի քանի լեզուներ
և մտքուր հայերէն, առ այն անձնաւորութիւն
է, որ հիմք դրեց Թեհրանի մէջ առաջին անգամ
«Հայկազն» ուսումնարանին: և այժմ նպատակ

ունի «Վարդապետական ընկերութեան» անդործ
մնացած տպարանը գնել և տանել Թեհրան, հրա-
տարակելու մի հայ լրագիր. նա գրաշարութիւնը
ինքը գիտէ և այնտեղ կարող է սովորեցնել:
Յանկանում ենք աջողութիւն:

Համառօտելով մեր խօսքերը, կը խնդրէիք
խոնարհաբար պ. Արմենակից իր գրուածների
մէջ մի քիչ քաղաքավարի էլ լինել:

Արէլ Ապրեսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 21 Նոյեմբերի

Կարգադրով «Մշակի» 217 համարի մէջ իմ ազ-
նիւ բարեկամ պ. Գրիգոր Նիկողոսեանի գեղե-
ցիկ նամակը կ. Պոլսից, Սեբաստիայի Խուսնա-
լի հայ գիւղացոց մէջ կազմված «Ռուսաւոր-
չեան» ընկերութեան մասին և ուղարկելով այս
նամակին հետ 3 ռուբլի, — շատ կը պարտաւո-
րացնէք ինձ, եթէ ձեր կարգադրութեամբ ու-
ղարկէք պ. Նիկողոսեանին այդ փողի արժո-
ղութեան չափ տաղանդաւոր Բաֆթիի գրքերից
«Ռուսաւորչեան» ընկերութեան նպատակի հա-
մար:

Միքայէլ Սաղաթէլեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 22 Նոյեմբերի

Մի երեք տարի սրանից առաջ, մի խնձոյժի
ժամանակ Ղալարի մէջ, զօրազգաբար պատա-
հում է մի որը հայ երիտասարդ Արամ Եփրե-
նեանց անունով, որը մի քանի երգ է երգում
հաւաքված հարուստների համար: Այս մեր կրե-
ստները, որոնք թուով լինում են 15 հոգի և
սրտնք ձեռքին է քաղաքի առաջադիմութեան
զինքն տեսնելով երիտասարդի անել վիճակը և
ձայնի աջողութիւնը, մի բարի միտք է ծագում
նրանց մէջ, այն է ուղարկել նրան Ներսիսեան
դպրանոց, որպէս զի մի օրինաւոր կրթու-
թիւն ստանալ և արժանաւոր քաշանայ դառ-
նալ իրանց համար, որովհետև Ղալարում օրի-
նաւոր քաշանաների սով է: Իսկայն համարիս-
տակն թուով են կայացնում և որոշում են
առ Նրան 300 ռուբլ տարեկան: Վերոյիշեալ
երիտասարդն էլ յայդ զննելով աղաների վրա,
զայն է Թիֆլիս, ուր ընդունվում է Ներսիսեան
դպրանոցի երրորդ դաստառն և տարուց տարի
աջողութեամբ փոխադրվելով յաջորդ դաստառն-
ները, հասնում է մինչև հիւնդերդը: Ար-
աւ տարի վերոյիշեալ աղաները բարեխղճու-
թեամբ կատարում են իրանց պարտքը, ուղար-

կելով 300 ռուբլ տարեկան վճարը: Եւ այս տա-
րի եւ խոստանում են Նիսիսեանին դարձեալ
օգնել և խեղճ ուսանողն էլ դրամից բաւորովին
զուրկ լինելով այս վերջին ամիսները, բայց
յայտ ունենալով, որ պէտք է բարեբարներից
ստանալ, պարտք է անում պանդուխտ իր ան-
հրաժեշտ պիտոյից համար (չը յիշելով զեւ այն
կողմից և նրա զգայուն սիրտը վիրաւորող յի-
շոցները, որ նա համբերութեամբ ընդունում է
իր բնակարանի տիրոջից, չը կարողանալով վճա-
րել անհնակի վարձը), Եւ ինչ էք կարծում.
Ինչ է ստանում այսքան նախատանաց փոխա-
րէնք, — մի նամակ, որտեղ, բարեբարները քա-
ցատում են նրան օգնել: և մինչև անգամ
նրանցից մէկը նամակով յայտնում է, որ Լաւե-
լորդ է նամակներով և հեռագիրներով ինձ ան-
հանգիստ առնել, եւ իմ տալիքս տուել եմ:
Գրիւս անգոր է նկարագրել այն վայրկեանը,
երբ Նիսիսեանցը ստանում է նամակը: Եւ յի-
րաւի, երեակայեցէք խեղճ ուսանողի դրութիւնը,
չըջապատված անժանօթ տարրով և առանց
գրամի Թիֆլիսի պէս մի քաղաքում: Այնուհետև
պանդուխտ և անհնակի տէրերն էլ խմանալով՝ որ
այլ եւ Նիսիսեանցը անկարող է վճարել պարտքը,
երկուսն էլ մեծում են նրան, առաջինը՝ կերա-
կուր և երկրորդը՝ անհնակ սալ: Նրա ընկերները
խեղճով իրանց ընկերոջը, ինչպէս և ինչ օգ-
նում են, բայց նրանք եւս հրաժարում են,
որովհետև իրանք էլ աղքատ են: Ամենին յայտնի
է Ներսիսեան դպրանոցի սաների վիճակը դա-
մական կողմանէ. առհասարակ նրանք բոլորն էլ
աղքատ են: Եւ այսպիսի անել վիճակի մէջ մնա-
ցել է խեղճ քաղաք, միայն մի բլուզով
այս ցուրտ ժամանակը, մինչդեռ նրա բարեբար-
ները, իրանց խօսքը չը կատարելով, շարունա-
կում են լաւ կեանք վարել, կուշտ ուտել ու խմել
և երկի այս բալէիս կանաչ սեղանի շուրջը
նստած, թուով խաղալ: Տեսնե՛ք Ներսիսեան
դպրանոցի վարչութիւնը ինչ կարգադրութիւն
կանի այս պատահարի վերաբերեալ: Այժմ ըն-
թերցողների արդար վճին եմ յանձնում զղար-
ցոց միանգամայն նախատիք բերող այդ ցաւ-
լի իրողութիւնը, իսկ ինձ մնում է զարմանալ
և ցաւել տեսնելով ինչ աստիճան ստոր վիճակի
մէջ են Ղալարի ընկալարները, որ 15 անձնաւո-
րութիւն և այն էլ առաջին կարգի հարուստներ,
չեն կարողանում իրանց խօսքը կատարել մի
300 ռուբլ չնչին գումար վճարելով: Ի՜նչ կը
նշանակէ սովեալ մարդուն տալ կերակրի համը
տեսնելու և թոյլ չը տալ նրան ուտել, ինչու
զրկել նրան այն լոյսից, որ գուցէ ապագայում
իրանց օգուտ կը տար: Ի՜նչու խափանեցին
աղաները Նիսիսեանցի ասպարէզը, որով իրա-
ւամբ, գուցէ նա իր համար մի ուրիշ ասպարէզ
ընտրած լինէր, և վերջապէս ինչ ստորութիւն,
չը տալ խոստացած միջոցը, երբ երիտասարդին
երկու տարի է մնացել աւարտելու: Ահա,
այսպիսի հազար ու մի ցաւալի երեւոյթներ հայ
տեսնելով կամ լսելով, կամ կարգադրով պէտք
է աշխատի հետեւել «Մշակի» գաղափարներին,
այն է, հիմնած բարեգործական ընկերութիւնը իր
նպատակին հասցնել, որով ուսանողութիւնը կա-
րողանար ապաստվել կամայական անձանց ձեռքից
և կեանքի զանազան խանգարիչ անցամաշեցի-
րից, կարողանար անվրդով աւարտել իր ուսման
ընթացքը: Թող հասկանայ մեր հասարակութիւ-
նը, որ «Մշակի» խօսքերը չափած ու կշռած են:
Այս երկրորդ գրելով կարծում եմ որ մեր աղա-
ների բարկութիւնը շարժած կը լինեմ, բայց եւ
գրել եմ կատարելով միմայն ընկերական պարտ-
քըս և եւ իմ խղճի առաջ արդար եմ:

Ն. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Порядок» լրագրին Գանձակից հաղորդում
են. Այստեղ ապտում են քաղաքային վարչա-

թեան մտցնելուն, Դրա մասին արդէն հարկա-
ւոր առաջարկութիւնները եղել են և, ինչպէս
ասում են, շուտով թողլուութիւն կը ստացվի:
Այդպիսով կողմանեան փոխադրայութեան նա-
հանգական միակ քաղաքը, որ մինչև այժմ արն-
տեսական կողմից ամբողջապէս պոլիցիայից
կախումն ունէր, կը հաւասարվի իր իրաւունք-
ներով ռուս այլ քաղաքների հետ, որոնք կա-
ռավարվում են ընտրված անձնեցներով: Կար-
ծում են, որ Գանձակի քաղաքային դուման ե-
կող տարվայ սկզբին կը բացվի:

Ֆինանսների միւնիստրութեան մէջ ներկայումս
քննվում է Ռուսաստանից նաւթ դուրս տանելը
բաւորովին արգելելու խնդիրը այն նպատակով,
որ ազատեն այդ թանգագին նիւթը օտարների
յափշտակութիւնից:

Ռուս լրագիրներում կարգում ենք, որ վերջին
ժամանակներում շատերը փողեր են ուղարկում
զանազան տեղեր ապահոված և հասարակ նա-
մակների մէջ, որ կարող է պատահել նրանից,
որ շատերը չը գիտեն թէ այդ ձևով փողեր ու-
ղարկելը օրէնքներով արգելված է: Այդ բանը
աշխ առաջ ունելով, փոստային կառավարու-
թիւնը յայտնում է, որ փող ուղարկելը կարելի
է միայն փողաւոր ծրարների մէջ, հակառակ
դէպքում փողերը յարգուհիս են դրամվում:

Շատ տեղերից մեզ գրում են որ ստացել են
ուսումնարանների համար պ. Բաղդասար Սար-
գրսեանից ռուբլ Դանադիկեանի (Հրապարակա-
յիս Զայն) գիրքը և շնորհակալութիւն են
յայտնում նախորդին: Մեզ անհարկն է տպագ-
րել այդ բոլոր շնորհակալութիւնները:

«Ժուրնալ դ'Օրիան» լրագրին գրողներից
շատերը զարմանում են ինչ է պատճառը, որ
գրվելով այդ թերթին, ստանում են միայն նրա
31-որդ համարից և ոչ թէ սկզբից: Պատճառը
չառ պարզ է. այդ համարից միայն սկսվեցան
թերթի մէջ հայոց խնդրի վրա յօդուածները,
որեմն այդ համարից միայն խմբագիրը սկսեց
տպել իր լրագրի աւելի մեծ թիւ օրինակները,
իսկ մինչև հայոց օրգան դառնալը «Ժուրնալ
դ'Օրիան» շատ սակաւաթիւ օրինակներով էր
տպագրվում, որեմն թէ 31-որդի բոլոր համար-
ները սպառված են: Իսկ այն պարոնները,
որոնք աւելի ուշ գրվեցին, շատ հաւանական է,
որ 31-որդ համարն էլ չեն կարողանայ ստա-
նալ:

Լայպցիգում հրատարակող «Leipziger Zeit-
tung» լրագրում կարգում ենք մի երկար առաջ-
նորդող յօդուած «Ein armenischer Schmerzens-
schrei» վերնագրով (Հայոց հաւառանք), որի մէջ
յօդուածագիրը խօսում է վիլենայում հրատա-
րակվով «Ժուրնալ դ'Օրիան» մասին և գլխա-
ւորապէս Գրիգոր Արմենու թրջիւրի մա-
սին (Թիւրքաց հայերի տնտեսական դրութիւն)
վերնագրով: Բողոքած երեք և կէս կողմից է
քաղկացած և շատ համակրութեամբ է վերաբեր-
վում զէպի Թիւրքաց հայերը: Բողոքածագիրը
վերջացնում է իր խօսքերը տեսլով թէ այդ տե-
նակ նշանաւոր ցեղական յատկութիւններ ու-
նեցող մի ազգութիւն, ինչպէս հայերը, որոնք
Ասիայի եւրոպացիներն են, պէտք է, ի հարկէ,
ժամանակով իրանց վրա ուղադրութիւն դարձնեն
Թէ Գերմանիայի և Թէ ամբողջ Եւրոպայի ինչպէս
երեւում է «Journal d'Orient» թերթը սկսում է
մեծ նշանակութիւն ստանալ Եւրոպայում: «Leip-
ziger Zeitung» լրագիրը ասում է թէ մի ազգու-
թեան շուրջը պաշտպանելու համար ծառայեց-
նում են մասնաւոր, առհասարակ, և հայերն էլ
այդ միջոցին ձեռնամուխ եղան: «Այդ ուղղու-

թեան ամենանշանաւոր (markantesto) հրատարակութիւնը Վիլնայում լոյս տեսնող «Journal d'Orient» թերթն է։ Անա ինչ խօսքերով վերաբերում է Լայպցիգի թերթը ղէպի «Ժուրնալ դ'Օրիէնտ» լրագիրը Այնուհետեւ մանրամասնաբար խօսում է Գրիգոր Արթուրունու բրոշյուրի մասին։

Պ. Լայպցիգի խնդրում է մեզ տպել հետեւեալը։ «Ի տեղեկութիւն մեր գրականութեամբ պարագայով անձանց խնդրում եմ ձեր պատահան լրագիր միջոցով յայտնէք որ ես արդէն սկսել եմ թարգմանել Զօֆմանի «Лазутчикъ» և «Разказы для дѣтей» վէպերը, որոնց մօտիկ ապագայում վերջացնելով, մտադիր եմ հրատարակել, ուստի և խնդրում եմ մեր թարգմանիչներին ի զուր չաշխատեն այդ վէպերի վրա։

«Порядокъ» լրագրում կարդում ենք մի հեռագիր Օդէսայից, որ հաղորդում է թէ մի շաբաթվա ընթացքում Սարա Բէրնար երեք ներկայացումն տուեց Եւստայում և երկու ներկայացումն Օդէսայում, որոնցից արդիւնքը եղել է 83 հազար ֆրանկ։

Պ. Տէր-Դաթեանց խնդրում է մեզ յայտնել, որ վաղը, հինգշաբթի, նոյեմբերի 26-ին կը լինի նրա բնակիչի կը խաղան «Էնտրոպիան» ժողովի «Օդէսայի» մի գործողութեամբ, թարգմ. Մ. Մանկեանի և «Արդիւն» պաշտօնի Ստրոյկովսկու պիէսայից չորս գործողութիւններ, Բացի սրանից պ. Տէր-Դաթեանց կը պատմէ ժողովրդական կենսութիւնը, Տեղերի գները սովորական են։

«Մշակի» խմբագրութիւնը տարածել է արդէն տպւած ծրարներ, տպւած նամակներով իր գաւառական բաժանորդներին համար։ Մենք այդ ծրարները ուղարկելով ոչ ոքին չենք կամենում պարտաւորեցնել զրկել «Մշակին», բայց այդ միջոցով ուղեցնել ցանկացողներին հնչողները բաժանորդագրութիւնը։ Եւ ճշմարիտ, որքան հեշտանում է դրանով լրագրի բաժանորդագրութիւնը, ցանկացողը կարող է նաև ստացած ներկու ծրարներից մէկը առանձին իր ծանօթին, իր բարեկամին։

ԱՆՎԱՐԱՆԱԳԻՑ մեզ գրում են որ այդ քաղաքում և նրա շրջակայքում շարունակվում են այլ և այլ հիւանդութիւններ, ինչպէս տենդ, տիֆ և նոյնպէս մանկական հիւանդութիւններ, որոնք բաւական զօնք են տանում։

Մեզ գրում են ԱԼԷԿՍԱՆԴՐԱՅԷՆ «Փոստային կայարաններում մեծ անկարգութիւններ են լինում, այնպէս որ ճանապարհորդը անզաղար դիպչում է անբաւականութիւնների, ճանապարհներն էլ շատ ապահով չեն աւազակներից, Նոյն իսկ քաղաքում անզաղար լսվում է զոգութիւնների և սպանութիւնների մասին։ Անցնալ ամսին չորս թէ հինգ մարդ են սպանել այտուղ, Շատ ժամանակ չէ Ղաչախ գիւղից երկու նորասպան եղբայրներ Այվազեանք, ուղեորվում են սայլով Արագած սարի մօտով դէպի Երևան, Բայց Արագած սարի ստորոտում գտնվող վրանաբանակ աւազակ քրիզերը յարձակվում են այդ ճանապարհորդների վրա և մորթում են նրանց։ Անկարգութիւն է սպանվածների պառու մօր և երիտասարդ կիներ լացն ու յուսահատութիւնը, երբ գիւղացիներ գտնելով երկու երիտասարդների զուխները ճանապարհի վրա ընկած, բերում են այդ զուխները Ղաչախ գիւղը, ազգականներին։»

Մեզ գրում են որ Ալեքսանդրապոլի գաւառի գիւղերում տիրում է զիֆտէրիս հիւանդութիւնը, որ բազմաթիւ զոհեր է տանում մանուկներին, կան ծնողներ, որոնք մի ամսվա մէջ զրկվել են չորս թէ հինգ երեխաներից։

ԹԻՖԼԻՍՈՒՄ ամեն քան թարս է լինում, նոյնպէս թարս են լինում և մեր քաղաքային վարչութեան կարգադրութիւնները։ Լաւ ուղարկութիւն զարմեք և կը համազօրէ որ չոր եղանակի ժամանակ, երբ փողոցները ծածկված են թռուով, փողոցները և Միքայէլեան կամուրջը

կամ ամենին չեն ջրում, կամ շատ քիչ, Բայց հենց որ անձրև եկաւ և ցել է կանգնած փողոցներում ու կամուրջի վրա, — այն օրը շատ եռանդով փողոցները ջրում են և մինչև անգամ, բացի ջրելու սովորական միջոցներից, կարգադրում են բերել թուղի և ամբողջութեամբ դարդակում են նրանց փողոցի և կամուրջի մէջ տեղ։

ԱՆՎԱՐԱՆԱԳԻՑ մեզ գրում են որ այս օրերս ձեռնադրվեցան այդտեղ մի քանի նոր քահանաներ, որոնց թւում միայն մէկը միջնակարգ ուսում ստացած մարդ է, այսինքն Ներսիսեան զարդում է աւարտել իր ուսումը, իսկ մնացածները ծխական դպրոցներից դուրս եկածներն են։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԻՆԱՍԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Երկու կամ երեք տարի սրանից առաջ Գամբետայի միւնիստրութեան կազմվելը Ֆրանսիայի մէջ մի և նոյն էր համարվում, ինչ որ Գերմանիայի պատերազմի յայտնվել և կարող էր նշանաւոր քաղաքական զբաղակցութիւնների պատճառ դառնալ Գերմանական հասարակութեան մէջ համոզմունք էր տիրում, որ վրէժխնդրութեան զաղափարը հետզհետէ սաստկանում է Ֆրանսիայի մէջ։ Գամբետայ և վրէժխնդրութիւն անբաժան գաղափարներ էին կազմում Գամբետայի անշափ փառքի և բացառական դրութեան պատճառը համարվում էր նրա զիտաւորութիւնը վրէժխնդիր լինել Սեղանի անպատուութեան համար։ Գամբետայ ազգաւոր էր և այդ մարդու առաջին միւնիստր նշանակվելը գերմանացիների համար անփախչելի պատերազմի յայտնվել էր համարվում։ Ներկայումս Ֆրանսիայի կառավարչական ղեկը անցել է Գամբետայի ձեռքը և, կարծես թէ այդ իրողութեանը պատասխանելով, գերմանական զահական ծառը յայտնում է, որ խաղաղութիւնը երբեք այնքան հաստատ չէ եղել, որքան ներկայումս։

Գամբետայի անուան հետ միացած վրէժխնդրութեան գաղափարը անհետացել է։ Այժմ այլ ևս ոչ ոք վրէժխնդրութեան մասին չէ խօսում ոչ Ֆրանսիայի և ոչ Գերմանիայի մէջ և, եթէ խօսէին էլ, զբաղւած անպատակ խօսքեր կը լինէին առանց որ և է նշանակութեան։ Գամբետայի միւնիստրութիւնը գերմանական թէ կառավարութեանից և թէ ժողովրդից ընդունվեցաւ ոչ թէ միայն հանգստութեամբ, այլ ընդհակառակը մինչև անգամ համակրութեամբ փոխանակ երկիւղի գերմանացիները բարի ցանկութիւններ են յայտնում Ֆրանսիական նոր միւնիստրութեանը իշխան Բիսմարկ մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ, որոնք տպագրվում են լրագիրներին մէջ, գովում է Ֆրանսիական առաջին միւնիստրին։ Շատերը մինչև անգամ կարծում էին, որ պետական այդ երկու մարդիկը մինչև անգամ կարող են տեսնվել և նրանցից ոչ մէկը այդպիսի անցքը օտարօտի չէր համարում։

Որտեղից առաջացաւ այդպիսի յանկարծակի փոփոխութիւն երկու միմեանց թըշնամի ժողովրդների և նրանց հայրենասէր առաջնորդների մէջ։ Ի՞նչպիսի անցքեր կարողացան ծնել պատերազմական ոգին Ֆրանսիացիների և գերմանացիների սրտերին մէջ։ Այդպիսի փրկարար հաղթանակութիւն ունեցող փաստերը ամենքին յայտնի են։ Ֆրանսիացիները պատերազմական մի փոքր փորձ արին Տունիսի մէջ։ Նրանք դարձեալ

ակնհայտ եղան արիւնհեղութեան ծանր կողմին, դարձեալ տեսան պատերազմական անփախչելի անկարգութիւններ և դարձեալ յիշեցին յաճախ մոռացվող ճշմարտութիւնը, որ մինչև անգամ ամենափառաւոր պատերազմը այն զեղեցիկ պատերազմը չէ պարտական իր մէջ, որոնք պատմվում են սովորական պատմական նկարագրութիւններ և աւանդութիւնների մէջ։ Ֆրանսիայի մէջ մի սերունդ հասունացաւ, որ բաւ չէր մտաբերում 1870 թուականի պատերազմի արիւնայի սարսափները։ Այդ սերունդին մի նոր տեսական դաս էր հարկաւոր և դարձեալ տրվեցաւ Տունիսի մէջ։ Զիւսիային Աֆրիկայի մէջ տեղացիների հետ անաշուղ փորձեր անելուց յետոյ պատերազմական ցանկութիւնները Ֆրանսիայի մէջ կորցրին իրանց նշանակութիւնը գտնեալ ժամանակաւորապէս, իսկ ազատախօս և բազմակողմանի կրիտիկան յայտնեց պատերազմական «արհեստ» վրդովեցուցիչ մանրամասները և պատերազմական ժամանակի հետեւանքները նրա բազմաթիւ զոհերի համար։ Այն տեղի փոքրութիւնը, որտեղ կատարվեցան Տունիսի արշաւանքի տխուր անցքերը, հեշտացրեց անընդհատ հսկողութիւնը և հասարակական կրիտիկան, իսկ անցքերի համեմատական աննշանութիւնը երկրի ընդհանուր վիճակի համար առաջն առաւ այն մտածութիւնների, որոնցով սահմանափակվում է պատերազմական գործերի հասարակական գնահատութիւնը։ Ֆրանսիական հասարակութիւնը առողջացաւ պատերազմական հիւանդութիւնից։ Տունիսի արշաւանքի ժամանակ պատահած տխուր անցքերի ազդեցութեան տակ Վերջին ընտրութիւնների ժամանակ յաղթող հանդիսացան այն կանգիդատները, որոնք իրանց յայտնեցին խաղաղութեան կողմնակիցներ և արտաքին ձեռնարկութիւնների հակառակորդներ։ Ընտրողական նախագիծներից մեծ մասը պահանջում էր պատերազմական քիւղժեղի և զինուորական ծառայութեան ժամանակամիջոցի փոքրացնելը։ Անպայման խաղաղասիրութիւնը դարձաւ ընդհանուր պարտադիր սկզբունք և Ֆրանսիական ժողովրդի բոլոր դասերը իրանց այդ սկզբունքի կողմնակիցներ յայտնեցին։ Գամբետայի կառավարութիւնը աշողութիւն ունեցաւ, հիմնվելով ներքին հարցերի կարգադրութեան վրա առանց պատերազմական ձգտումների։ Գերմանիան կարող էր ստանաւորութեամբ նայել յաղթական գերմանացիների անհաշտ թշնամի և Էլզաս-Լոտարինգիան Ֆրանսիային վերադարձնել ցանկացող Գամբետայի միւնիստրութեան կազմվելուն։

Իսկայէս Տունիսի արշաւանքը մեծ բարերարութիւն էր թէ Ֆրանսիայի, թէ Գերմանիայի և թէ ամբողջ Եւրոպայի համար։ Այդ արշաւանքը ոչնչացրեց զինուորական կազմակերպութեան փախճանքն սպասող պատերազմի մասին երազող փարիզի ազգասէրների ցանկութիւնները և մի և նոյն ժամանակ հանգստացրեց գերմանացիներին, որոնք իրանց հայեացքները անհանգստութեամբ ղէպի Վոգելներն էին դարձնում։ Երկու մեծ ազգեր հանգստացան և կարծես թէ չէզոքութեամբ հաշտվեցան։ Վրէժխնդրութեան երկիւղը ինքն ըստ ինքեան ոչնչացաւ և այդպիսով միջոց տուեց թէ Ֆրանսիական և թէ գերմանական կառավարութիւններին զբաղվել ներքին հարցերով։ Այս բարեկամ ժողովրդները էժան չը նստեց Ֆրանսիային, որ 40 միլիոն ֆրանկից աւելի և մի քանի հազար զինուորների կենք զոհեց։ Բայց այդ զոհաբերութիւն

ները աննշան կորուստ են կազմում, եթէ համեմատենք Ֆրանսիական զինուորական նոր պատերազմի հսկայական հետեւանքների հետ։ Երբ հարկաւոր է լինում մարդկութեանը ամօթ բերող ամենասարսափելի և անմիտ կոտորածի առաջն առնել, ամեն բան կարելի է զոհել և այդ զոհաբերութիւնը կորած չի համարվի։ Տունիսի փորձը միջոց տուեց երկու հզոր ժողովրդներին մոռանալ փոխադարձ թշնամութիւնը և իրանց ուշադրութիւնը կենտրոնացնել ներքին հարցերի վրա, ինչպէս մի ժամանակ գուլուսների հետ ունեցած կոխը ստիպեց անգլիացիներին հրաժարվել Բիկոնսֆիլդի պատերազմական մտադրութիւններից։ Այդպիսի դասեր օգտաւէտ են ոչ թէ միայն անմիջապէս հետաքրքրված երկրների, այլ և այնպիսի պետութիւնների համար, որոնք գործին չեն մասնակցում։

Այսպիսով գրեթէ միաժամանակ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ Վիլհելմ կայսրի զահական ծառով և Գամբետայի միւնիստրական նախագիծով առաջ են բերած բացառապէս ներքին օրէնսդրական և տնտեսական հարցեր։ Գերմանական կառավարութեան նպատակն է՝ իր ձեռքն առնել օտարական խնդիրների լուծումը, մեծացնել իր միջոցները մասնաւոր, բայց պետական նշանակութիւն ունեցող ձեռնարկութիւնները յետ գնելով և գրաւել ազգաբնակչութեան մեծամասնութեան համակրութիւնը, յայտնի գիշումներ անելով բանւորներին Նոյն նպատակը կարելի է նկատել Ֆրանսիական միւնիստրութեան նախագիծ մէջ։ Չանազանութիւնը նրանումն է, որ առաջին ղէպում պահանջներ անվում են ոչ պատասխանատու, մինչև անգամ ժողովրդի կամքի դէմ մաքառող իշխանութեան կողմից, իսկ երկրորդ ղէպում ներկայանում են ժողովրդի հաւատարմ ներկայացուցիչներ, որոնք առաջարկում են ընդարձակել կառավարութեան գործունեութեան շրջանը ոչ թէ արտաքին փայլի համար, այլ երկրի ազատութեամբ յայտնած կամքի համեմատ նրա ընդհանուր պահանջներին բաւականութիւն տալու նը։ պատակով։ Առաջին ղէպում պետութիւնը կառավարող զինուորականների և պաշտօնականների դասը կամենում է հոգաբարձուներ նշանակել ժողովրդի վրա, մինչդեռ երկրորդ ղէպում կառավարութիւնը այլ առաջ ունի ոչ թէ հոգաբարձութիւն, այլ ինքնավարութիւն այդ բառի ընդարձակ նշանակութեամբ այնպէս, որ կարելի լինի հասարակական կարծիքի պահանջման համեմատ ընդարձակ փոփոխութիւններ և վերանորոգութիւններ մտցնել երկրի մէջ։ Գամբետայի նախագիծը պարունակում է միայն այն, ինչ որ յայտնեց ընտրողների մեծամասնութիւնը և ինչ որ ընդունվեցաւ այդ մեծամասնութեան կողմից։ Այդ նախագիծը կամայական, մի մարդու խելքի ծնունդ չէ, ինչպէս Գերմանիայում, այլ հասարակութեան հաւաքական վճիռ է։ Եթէ Գամբետայ ձգտութեամբ չը ձեռնկրպեց ժողովրդի ցանկութիւնները կամ մտցրեց իր նախագիծ մէջ այնպիսի կէտեր, որոնց ժողովուրդը չէ հաւանում, Ֆրանսիական պատգամաւորների ժողովը միշտ կարող է նախագիծը ուղղել, մի քանի առաջարկութիւններ մերժել, նորերը անել և նախագիծ մէջ թողնել միայն այն, ինչ որ ժողովուրդն է ցանկանում։ Եւրոպայի մէջ շատերը խօսում են Գամբետայի զիտաւորայի մասին, բայց եթէ զիտաւոր անուանվի մի պատասխանատու միւնիստր, որ իւրաքանչիւր բոլոր կարող է հետաքրք